ՎԱՐԴԻԹԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի ազգային արխիվ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄՈՒՄ (ԺԹ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – Ի. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿ)

Քահանայական սպասավորության խնդիրը մշտապես եղել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ուշադրության ներքո։ Ծխական կյանքի կազմակերպման գործընթացում քահանա-ծխականներ առողջ հարաբերությունների ձեւավորումը կախված էր ինչպես ծխականների՝ համայնքային կյանքին ներգրավվածության աստիճանից, այնպես եւ քահանայի անձնական որակներից, պատրաստվածության մակարդակից, ծխականների շրջանում որպես հոգեւորական ունեցած հեղինակությունից։ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վրաստանի եւ Իմերեթի թեմում բարձրագույն հոգեւոր իշխանությունները մշտապես փորձում էին թույլ չտալ ծուխ-հոգեւոր իշխանություն հարաբերություններում հնարավոր անջրպետի առաջացում՝ ուշադրությունը սեւեռելով քահանայական դասի խնդիրներին։

Վրաստանի եւ Իմերեթի թեմի բարձրագույն հոգեւոր իշխանությունների քայլերը քահանայական սպասավորության խնդրի լուծման ուղղությամբ. *Վրաստանի եւ Իմերեթի թեմում առկա էին քահանայական սպասավորությանն առնչվող որոշակի խնդիրներ։ Թեմական իշխանություններին հատկապես մտահոգում էին քահանայական դասի վարկանիշի օրեցօր նվազումն ու հեղինակազրկումը։ Ծխական քահանայի՝ ժողովրդի շրջանում որպես Հայ Եկեղեցու անմիջական ներկայացուցչի կերպարի որոշակի հեղինակազրկումը արդյունքն էր մի շարք խնդիրների, որոնք կուտակվել էին տասնամյակների ընթացքում։ Դրանք բազմաթիվ էին, որոնցից խորքային նշանակություն ունեին հատկապես քահանաների վարձատրության եւ նրանց կրթական մակարդակի խնդիրները։*

Քահանայական սպասավորության խնդիրը մշտապես եղել է հայ եկեղեցական եւ աշխարհական գործիչների ուշադրության կենտրոնում. դրա շուրջ բուռն քննարկումներ ծավալվեցին հատկապես ԺԹ. դարի 80—90-ական թվականներին եւ Ի. դարի սկզբին՝ Հայ Եկեղեցու բարենորոգության տարիներին։

Բարեկարգման ենթակա խնդիրների (եկեղեցու վարչական կառույցին, թեմերին, կաթողիկոսական ընտրությանը, կուսակրոնությանը եւ մի շարք այլ հարցերի առնչվող) շրջանակը բավական ընդգրկուն էր։ Սակայն Ի. դարասկզբին հայ հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների շարակարգում վերջինս բաժանվում է երկու հիմնական ոլորտի՝ քահանայական սպասավորության եւ Սուրբ էջմիածնի միաբանության հարցերի։ Խնդիրն առավել բարդանում էր այն պատճառով, որ մշտապես ենթարկվում էր իրավիճակային լուծումների[1]։

Վրաստանի եւ Իմերեթի թեմում քահանայական սպասավորության խնդրի լուծման ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկվեցին հատկապես ԺԹ. դարի 80-ական թվականներին, երբ թեմական առաջնորդի պաշտոնն ստանձնեց Արիստակես եպս. Սեդրակյանցը (1883–1889)[2]։ Թեմական կառավարման համակարգի բարեկարգումը նա որոշեց սկսել Թիֆլիսից՝ փորձելով վերակազմավորել քահանայական դասը եւ բարելավել թեմի նյութական-տնտեսական դրությունը։

Այդ եւ այլ հարցերի քննման նպատակով՝ Արիստակես եպս. Սեդրակյանցը կազմեց վեց անդամից բաղկացած հատուկ հանձնաժողով («Յանձնաժողով առաջնորդական յանձնարարութեանց»)[3]։

Հանձնաժողովը նախ եւ առաջ կազմեց հաստիքացուցակ, որով Թիֆլիսի քահանաների թիվը պետք է կրճատվեր մինչեւ 51-ի[4]։ Թիֆլիսի բոլոր եկեղեցիները միասին ունեին մոտ 6131 ծուխ, 65 քահանա[5], 5 սարկավագ, 13 դպիր։ Խնդրի լուծման համար հանձնաժողովը որոշեց ձեռնարկել հետեւյալ քայլերը՝

— կրճատել քահանաների թիվը,

— հիմնել ապահովության գանձարան,

— վերացնել դպրական շրջիկ գանձանակները՝ փոխարենը դպիրներին եւ սարկավագներին նշանակել որոշակի վարձատրություն[6]։

---

[1] Այդ մասին տե՛ս Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901–1906 թթ., Երեւան, 2008, էջ 176–177, 190–191։

[2] Արիստակես եպս. Սեդրակյանցի կենսագրությունը եւ մահախոսականը տե՛ս «Արարատ» ամսագիր, Ա., 1907, էջ 51–54։

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 175, ց. 1, գ. 7, թ. 19–20։

[4] Տե՛ս անդ, գ. 7, թ. 45։ Ժողովրդից տուրքեր եւ նվերներ հավաքելու համար 1883 թ. կազմված ժամանակավոր ծրագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 216, թ. 2–4։

[5] 1885 թ. դրությամբ ամբողջ թեմում սպասավորում էր 400-ից ավելի քահանա. անվանացանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 3, թ. 1–139։

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 175, ց. 1, գ. 6, թ. 7–8։

Հանձնաժողովը նշյալ քայլերով հույս ուներ կարճ ժամանակահատվածում որոշակի արդյունքի հասնել։ Հարցի արմատական լուծումը հանձնաժողովի անդամները տեսնում էին քահանաների համար աշխատավարձ սահմանելու մեջ։ Սակայն դրա համար, ինչպես իրենք էին մտածում, ժամանակ էր հարկավոր՝ մինչեւ «Քահանաների ապահովության գանձարանը» կհարստանար կողմնակի եկամուտներով, կամ ժողովրդի շրջանում կհասունանար նրանց կանոնավոր աշխատավարձ սահմանելու միտքը։

Արիստակես եպս. Սեդրակյանցը չկարողացավ ավարտին հասցնել ձեռնարկած քայլերը՝ 1889 թ. թեմական առաջնորդի պաշտոնից հրաժարվելու պատճառով։ Ավելի ուշ՝ Ի. դարասկզբին, նա իր տեսակետները հասարակությանը ներկայացրեց առանձին գրքույկով[7]։

Քահանայության եւ թեմում առկա մյուս խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքները շարունակվեցին նաեւ Գեւորգ արքեպս. Սուրենյանցի առաջնորդության շրջանում (1894—1904)[8]։

Քահանաների կեցության պայմանները որոշակիորեն բարելավելու նպատակով՝ 1895 թ. վերահիմնվեց «Քահանաների ապահովության գանձարանը»[9], որի կանոնադրությունը հաստատվեց 1897 թ.[10]։ Գանձարանը պետք է հավասարաչափ նպաստ բաշխեր ինչպես Թիֆլիսի բոլոր քահանաներին, այնպես եւ հոգեւորականների որբերին ու այրիներին։ Գանձարանի միջոցները պետք է գոյանային նվիրատվությունների եւ Թիֆլիսի գերեզմանատներից ստացվող եկամուտների հաշվին[11]։

Ավելի ուշ՝ 1900 թ., քահանաների ամսական վարձատրության նշանակման առաջին փորձը կիրառվեց Բաթումում։ Բաթումի գործակալ Մեսրոպ քհն. Մելյանն այդ առնչությամբ գրում է, որ տեղի հայերի շրջանում օգտակար նորույթ է տեղ գտել, որի շարունակության դեպքում շատ խնդիրներ լուծում կստանան։ Բաթումցի բազմաթիվ ծխականներ,

---

[7] *Այդ մասին տե՛ս* Արիստակես եպս. Սեդրակեանց, *Քահանայական խնդիր, Մոսկուա, 1900, էջ 1—220։*

[8] *Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վրաստանի եւ Իմերեթի թեմում նրա իրագործած բարենորոգումների մասին տե՛ս* В. Григорян, Об оптимизации системы управления Грузино-Имеретинской епархии (1894—1904), *«Բանբեր հայագիտության», 2018, թ. 2, էջ 100—109։*

[9] *Թիֆլիսի հայոց հոգեւորականության ապահովության գանձարանը գործել է մինչեւ 1921 թ.։ Ապահովության գանձարանի արխիվային գործերը տե՛ս ՀԱԱ, ֆ. 231, ց. 1, գ. 1—60։*

[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 76, թ. 21։*

[11] *«Քահանաների ապահովության գանձարանի կանոնադրություն», հոդ. 2, 3 (տե՛ս անդ, գ. 76, թ. 64—66)։*

դիմելով Հայոց հայրապետին, տեղեկացնում են տեղի երկու քահանայի համար ամսական վարձատրություն նշանակելու մասին՝ պայմանով, որ դրա փոխարեն նրանք կդադարեն ծխերից դրամ հավաքել, իսկ համայնքը կվճարի եկեղեցական տուրքերը։ Վեհափառ Հայրապետը հավանություն է տվել այդ որոշմանը եւ հաստատել քահանաներին աշխատավարձ նշանակելը։ Այսպիսով, տարեկան որոշակի աշխատավարձով քահանա ունենալու առաջին օրինակը ցույց է տալիս Բաթումի հայ հասարակությունը[12]։

Չնայած Բաթումի օրինակին՝ քահանաներին աշխատավարձ սահմանելը մնաց քննարկումների փուլում եւ համընդհանուր բնույթ չստացավ։ Այսպես՝ 1910 թ. Թիֆլիսի հայ քահանաների ապահովության գանձարանի վարչության՝ Վրաստանի եւ Իմերեթի թեմի կոնսիստորիային[13] ուղղված գրության մեջ ասվում է, որ քաղաքի բոլոր քահանաները հրավիրվում են կոնսիստորիայի գրասենյակ՝ հաշվետեսներից ստացած նախկին վարչության հաշիվները զեկուցելու եւ քահանաներին ռոճիկ նշանակելու նպատակով կանոններ մշակող մի հանձնաժողով ընտրելու համար[14]։

Խնդրահարույց էր նաեւ քահանայական ընտրությունների կազմակերպումը։ Դրանց անցկացման ընթացքի մասին հետեւյալ տեղեկություններն է հաղորդում Գարեգին վրդ. Հովսեփյանը. «Քրիստոնէական նախնի սովորութեան համաձայն՝ քահանայացուների ընտրութիւնը Հայաստանեայց Եկեղեցու մէջ կախուած է համայնքից կամ ծխականներից։ Հին ժամանակներից ընտրութեան որոշ ձեւ, եղանակ չէ հասել մեր ձեռքը. այժմ քահանայացուն անձամբ կամ նորա բարեկամներից մէկը նախօրօք պատրաստուած համախօսականը շրջեցնում է տնէ տուն, խանութէ խանութ եւ ստորագրել տալիս։ Բաւական է ստորագրողների թիւը 100-ից անցաւ, համախօսականը պատրաստ է։ Այսպիսի դէպքերում խնդիրք, աղաչանք, երբեմն մինչեւ կաշառք»[15]։

Հավելենք, որ ազգային կուսակցությունների գործունեության շրջանում քահանայական ընտրությունները երբեմն վերածվում էին կուսակցությունն ընդլայնելու հնարավորության։ Քահանայի տեղի համար ստորագրություններ հավաքելու գործում նրանք պայքարում էին միմյանց

[12] Տես «Արեւելք», 1900, թ. 4333, էջ 1։

[13] Թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմին։

[14] Տես ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 567, թ. 2։

[15] ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Քահանաների ընտրութեան եղանակը, «Արարատ», Գ., 1900, էջ 101։

դեմ։ Նման դեպքերում քահանան կարող էր հոգեւոր գործառույթներ իրականացնողից վերածվել «կուսակցականի»[16]։

1905 թ. Սուրբ Էջմիածնի սինոդը, քահանաների ընտրության եղանակի եւ ձեռնադրության բարեկարգման նպատակով, երեք մասից բաղկացած (քահանայական ընտրություն, քահանայի պատրաստություն, ուսման վկայականի հետ կապված հարցեր) հատուկ ծրագիր մշակեց («Ծրագիր կանոնաց»)։

Բարձրագույն հոգեւոր իշխանությունը, թողնելով համախոսականի միջոցով աշխարհականների մասնակցությամբ քահանաներ ընտրելու եղանակը, փորձում է որոշակի չափորոշիչներ սահմանել։ Օրինակ՝ համախոսականի հետ միասին անհրաժեշտ էր ներկայացնել նաեւ թեկնածու քահանայի ուսման վկայականը, որի չլինելու դեպքում չէր ընդունվելու նաեւ համախոսականը։ Հստակեցվում էր նաեւ, թե որ դեպքում էր օրինական համարվում այս կամ այն համախոսականը։ Քահանայական ձեռնադրության համար նվազագույն տարիքային շեմ է սահմանվում 25-ը, իսկ առավելագույնը՝ 45-ը։ Ինչ վերաբերում է ընտրողներին, ապա յուրաքանչյուր տնից կարող էր մասնակցել միայն մեկ հոգի։ Արական ներկայացուցչի բացակայության դեպքում ընտրությանը կարող էր մասնակցել ընտանիքի իգական սեռի ներկայացուցիչը։ Մինչեւ 250–300 ծուխի դեպքում առաջադրվում էր երկրորդ քահանայի նշանակման հարցը[17]։

Քահանայության խնդրի հետ կապված իրենց մտահոգություններն էին հայտնում նաեւ Վրաստանի եւ Իմերեթի թեմի հոգեւոր գործիչները, որոնցից էր կոնսիստորիայի անդամ Գրիգորիս քհն. Երզնկյանցը։ Նա 1902 թ. իր զեկուցագրերից մեկում նշում է, որ թեեւ բարձրագույն հոգեւոր իշխանությունը վաղուց ձգտում է վերակազմավորել քահանայական դասը՝ համալրելով այն ուսյալ եւ կրթյալ անձանցով, այնուամենայնիվ, դա մնում է լոկ ցանկություն։ Ցավոք սրտի, քահանայի աստիճան են ստանում այնպիսի անձինք, որոնք այդ պաշտոնը դիտարկում են միայն որպես իրենց նյութական խնդիրները լուծելու միջոց։ Նրանք սկզբում վարում են «տիրացուի պաշտոն», ապա վերջում՝ ծերության հասակում, ծանրանում ծխականների վրա։ Զեկուցագրի վերջում Գրիգորիս քհն. Երզնկյանցը կոնսիստորիային առաջարկում էր նախ եւ առաջ հոգեւոր սպասավորներ նշանակել միայն բարոյապես ազնիվ եւ կրթյալ անձանց, ապա նրանց

[16] Տե՛ս Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, նշվ. աշխ., էջ 194։
[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 239, թ. 33–36 եւ շրջ.։

տալ բավարար ռոճիկ, տրամադրել կատարած արարողություններից հասանելիք բաժինը[18]։ Նա նաեւ քահանաներ պատրաստելու համար հատուկ կրթական ծրագիր մշակեց եւ 1905 թ. ներկայացրեց կոնսիստորիային[19]։

Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդին ուղղված մեկ այլ զեկուցագրում Գրիգորիս քհն. Երզնկյանցը հարց է առաջադրում, որ թեեւ սրբազանը գյուղական քահանաներից պահանջում է առնվազն չորրորդ դասարանի կրթություն, սակայն պահանջված կրթության բովանդակությունը շատ անորոշ է։ Գրիգորիս քհն. Երզնկյանցը գրում է. «Մինչեւ այժմ քահանայացուների քննելի գիտութեանց ինչպէս քանակը, այնպէս եւ ծաւալը եւ պահանջը շատ սահմանափակ եւ թոյլ է եղել, որովհետեւ նոցա չէ տրուել պարտադիր եւ մանրամասն ծրագիր, որով նոքա կարող լինէին հրահանգուել իրանց պատրաստութեան համար։ Այդ դժուարութիւնից ազատուելու նպատակով, ես կազմելով մանրամասն ծրագիրներ ինչպէս անհրաժեշտ, այնպէս եւ օժանդակ գիտութիւնների՝ ներկայացնում եմ դոցա յարգոյ Հոգեւոր ատենիդ եւ խոնարհաբար խնդրում քննութեան առնել...»[20]։

Ըստ Գրիգորիս քհն. Երզնկյանցի՝ գյուղական քահանան պետք է լիներ ոչ միայն հոգեւոր կարիքները հոգացող, այլ նաեւ զինված լիներ գիտելիքով։ Պարտադիր էր համարում Հին եւ Նոր Ուխտի, քրիստոնեական վարդապետության, բարոյագիտության, աստվածպաշտության, եկեղեցական եւ հայոց պատմությունների, տոմարի ու հայոց լեզվի ուսուցումը։ Օժանդակ առարկաներն էին՝ թվաբանություն, երկրաչափություն, բնական գիտություններ եւ աշխարհագրություն։ Առաջարկում էր նաեւ քահանաներին զինել բժշկական ամենատարրական գիտելիքներով։ Դա բացատրում էր նրանով, որ քաղաքներում միշտ կան բժիշկներ, իսկ գյուղերում ոչ, ուստի ծայրահեղ դեպքերում քահանան կարող էր նաեւ այդ առումով օգնության հասնել իր ծխի անդամներին։

Ինչպես տեսնում ենք, Գրիգորիս քհն. Երզնկյանցը եւս քահանայական դասի վերակազմավորման կարեւոր նախապայման էր համարում կրթության, բարոյական հատկանիշների եւ նյութական ապահովության խնդրի լուծման զուգակցումը։

1906 թ. հունվարի 8-ին Եղնիկ ավ. քհն. Երզնկյանի խմբագրությամբ Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Հովիւ» շաբաթաթերթը, որի նպատակն

---

[18] *Տե՛ս անդ, գ. 317, թ. 93–94։*
[19] *Տե՛ս անդ, գ. 347, թ. 36։*
[20] *Անդ, գ. 347, թ. 36։*

էր նպաստել հոգեւոր սպասաւորության բարեկարգմանը, հոգեւորականների հեղինակության վերականգնմանը, հովվի եւ հոտի միջեւ վստահելի, ամուր հարաբերությունների հաստատմանը՝ զերծ մնալով դավանաբանական բնույթի հարցերի բարձրաձայնումից[21]։

Ժամանակի մամուլի էջերում բարձրաձայնվում էր նաեւ այն խնդիրը, որ չնայած Թիֆլիսի քահանաները թվով շատ են, սակայն նրանցից քչերն են հետաքրքրվում ընդհանուր ընկերակցական գործունեությամբ։ Նրանք հաճախ ապրում եւ գործում են միմյանցից անկախ՝ առանց ներքին կապի[22]։

Քահանաների միջեւ ներքին համագործակցային կապի զարգացման, եկեղեցուց դուրս նրանց համար ընդհանուր շփման հարթակի ստեղծման եւ ինքնակրթության խթանման նպատակով բացվեցին նաեւ քահանայական ընթերցարաններ Ախալցխայում եւ Թիֆլիսում։

1880 թ. Վրաստանի եւ Իմերեթի թեմի վիճակային կոնսիստորիայի՝ Ախալցխայի հոգեւոր կառավարությանն ուղղված մի հրամանից պարզվում է, որ Ախալցխայի գավառապետը սկզբնապես արգելել էր քաղաքի հոգեւորականների համար ընթերցարան բացել, քանի որ հանգուցյալ թեմակալ առաջնորդ Գաբրիել արքեպս. Այվազովսկին (1876–1880 թթ.) չէր հասցրել ստանալ նահանգապետի թույլտվությունը[23]։

1885 թ. Թիֆլիսի նահանգապետի գրասենյակից Ախալցխայի փոխանորդ Խորեն Ստեփանեին ուղղված նամակում կարդում ենք, որ Ախալցխա քաղաքում հայ հոգեւոր կառավարության հսկողության ներքո ընթերցարան բացելու թույլտվություն չէր կարող տրամադրվել, քանի որ այդ առնչությամբ չկար Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի թույտվությունը[24]։

Չնայած դրան՝ ընթերցարանը վերջապես բացվեց։ 1884 թ. Աշոտ քհն. Թեմուրազյանը, դիմելով թեմակալ առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանցին, առաջարկում էր Ախալցխայի օրինակով Թիֆլիսում եւս մատենադարան-ընթերցարան ու ժողովարան բացել[25]։ Ըստ նրա ներկայացրած կանոնադրության[26]՝ ընթերցարանը պետք է ունենար երկու մասնաճյուղ՝

---

[21] *Տե՛ս «Հովիւ», 1906, թ. 1, էջ 4։*
[22] *Տե՛ս «Նոր-Դար», 1894, թ. 158, էջ 2. «Արձագանք», 1896, թ. 74, էջ 1։*
[23] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 355, ց. 1, գ. 351, թ. 29–30։*
[24] *Անդ, գ. 351, թ. 54։*
[25] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 131, թ. 3-ի շրջ.։*
[26] *1884 թ. կազմված կանոնադրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 232, թ. 1–5 եւ շրջ.։*

գլխավորը բուն քաղաքում, իսկ երկրորդը՝ Հավլաբարի եկեղեցիներից մեկի գավթում։ Գրքեր վերցնելու իրավունք էր տրվում նաեւ միանձնուհիներին[27]։ Թիֆլիսում ընթերցարան բացվեց 1896 թ.[28]։

Քահանայի դերն ու նշանակությունը մեծ էր բարձրագույն հոգեւոր իշխանության համար, քանզի նա էր ժողովրդի առջեւ եկեղեցու անմիջական սպասավորը։ Ճիշտ է՝ քահանաները առաջնորդող դեր չունեին եկեղեցու ընդհանուր բարեկարգության, նրա վարչական ղեկավարման գործում, սակայն թեմական իշխանության քայլերն անհետեւանք կարող էին մնալ բանիմաց քահանաների բացակայության պատճառով։ Պատահական չէ, որ քահանայի հեղինակության անկումը, ցավոք, ինքնին նշանակում էր հոգեւոր իշխանության վարկանիշի նվազում։

Քահանաների նյութական ապահովության խնդիրը. Վիճահարույց խնդիրներից էր քահանաներին ամսական հաստատուն աշխատավարձ սահմանել-չսահմանելը։ Եկեղեցական որոշ գործիչների կարծիքով՝ դա դեմ էր Աստվածաշնչին, մյուսները հակադարձում էին՝ նշելով, որ նախկինում նման փորձ եղել է արդեն։

Թե՛ «Պոլոժենիե»-ով, թե՛ «Ծխական կանոնադրությամբ»[29] քահանայի նյութական ապահովության պարտականությունը դրված էր ծխական համայնքի վրա։

Համաձայն 1907 թ. «Ծխական կանոնադրության»՝ ծխական համայնքը դա կարող էր անել հետեւյալ եղանակներով՝

— սահմանել մշտական ռոճիկ,

— տուրքեր վճարել հոգեւոր ծիսակատարությունների համար,

— կամավոր նվիրատվություններ անել,

— գյուղերում՝ հող, կալամաս (տարեհախ) տալ (հոդ. 63)։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քահանայի վարձատրության չափը կախված էր ծխականների թվից, նրանց բարեկեցության աստիճանից՝ հաճախ էր բարձրաձայնվում նաեւ ծխաբաժանության խնդիրը։ Ծխերի քանակի համար քահանաների միջեւ հաճախ վիճաբանություններ էին առաջանում։

Ընդ որում՝ այդպես էր թե՛ Թիֆլիսում, թե՛ թեմի մյուս քաղաքներում ու գյուղերում՝ պայմանավորված ծխականների քանակով, որը կարող

[27] Տես ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 131, թ. 1–14։

[28] Տես «Արձագանք», 1896, թ. 74, էջ 1։

[29] Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ծխական կանոնադրությունը» կազմվել է 1900 թ., հաստատվել՝ 1907 թ.։ Հետագայում այն ենթարկվել է վերախմբագրությունների։ 1907 թ. կանոնադրության արխիվային տարբերակը տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 36, թ. 1–15։

էր տարբեր լինել (տե՛ս աղ. 1, 2)։ Չնայած դրան՝ բարձրագոյն հոգեւոր իշխանությունները հատուկ հրահանգներով փորձում էին կարգավորել այդ խնդիրը։

Քահանայի վարձատրության անորոշ եւ պատահական լինելը նպաստում էր քահանա-ծխական հարաբերություններում շահերի տարբերության առաջացմանը, ինչն անջրպետ էր ստեղծում նրանց միջեւ։

Ըստ Սմբատ քհն. Սարգսյանցի՝ քահանան ծխականի աչքում աստիճանաբար դառնում էր մի չարագուշակ նշան, հաջողությանն ու կյանքին հակադիր մի անձնավորություն[30]։

Հեղինակի կարծիքով՝ վերոնշյալ իրավիճակի առաջացման գլխավոր պատճառներից մեկը, թերեւս, քահանայի վարձատրության անորոշ եւ պատահական լինելն էր[31]։ Հաճախ նրանք, եկեղեցական սպասավորությունից զատ, ստիպված էին զբաղվել նաեւ երկրագործությամբ, առեւտրով, կապալներով եւ այլն։ Քահանան իր եկամուտն ապահովելու համար ստիպված էր զիջումների գնալ, հարմարվել տեղական սովորույթներին[32]։

Ստացվում է, որ քահանաները, իրավիճակից ելնելով, երբեմն ստիպված էին իրենց հիմնական առաքելությանը զուգահեռ զբաղվել նաեւ այլ գործերով։ Այս երեւույթը բացասական հետեւանք ուներ, քանի որ ժողովրդի շրջանում քահանայությունը հաճախ դիտվում էր իբրեւ ապրուստի միջոց, սակայն ոչ հոգեւոր սպասավորություն։ Ուշագրավ է նաեւ, որ հոգեւորականները եւս միանշանակ չէին վերաբերվում քահանայի, բուն առաքելությունից զատ, նաեւ այլ գործերով զբաղվելուն։ Նրանք մի կողմից շեշտում էին դրա բացասական կողմը, մյուս կողմից՝ արդարացնում՝ ելնելով նյութական ապահովության խնդրից։

Գյուտ ավագ քհն. Աղանյանցը եւս այն կարծիքին էր, որ շատ պատճառներ կային, որոնք թույլ չէին տալիս լուծել քահանայական սպասավորության խնդիրը, սակայն դրանցից գլխավորը նրանց նյութական ապահովության հարցն էր։ Անհրաժեշտ էր քահանաների համար ոչ միայն մշտական արդյունք ապահովել եւ ռոճիկ նշանակել, այլ նաեւ համակարգվածություն մտցնել։ Նա նաեւ տարանջատում էր գյուղական եւ քաղաքային քահանաներին՝ նշելով, որ գյուղականները, թերեւս, ավելի հաստատուն վիճակում էին, քանի որ ունեին վարելահող կամ կալահաց,

---

[30] Տե՛ս Սմբատ քհն. Սարգսեանց, Դարձեալ գիւղական քահանաների մասին, «Արարատ», ԺԲ., 1907, էջ 1025։

[31] Այս մասին տե՛ս «Արարատ», Ժ.–ԺԱ., 1907, էջ 892–896։

[32] Տե՛ս Սմբատ քհն. Սարգսեանց, Դարձեալ գիւղական քահանաների մասին, էջ 1027–1029։

իսկ քաղաքայինների դրությունը շատ ավելի անկայուն էր։ Գյուտ ավագ քհն. Աղանյանցը կարծում էր, որ հարկավոր էր կամավոր եւ անորոշ տուրքերը վերացնել, ծիսակատարություններն անվճար դարձնել[33]։

Ըստ էության՝ նյութական ապահովության հարցը սերտորեն առնչվում էր քահանայական սպասավորության խնդրին, որի լուծման վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքներն աչքի էին ընկնում որոշակի իրարամերժությամբ։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քահանայական դասի վերակազմավորման համար առաջնային նախապայման էր նրանց կրթական եւ նյութական ապահովության խնդիրների լուծումը։ Հայ Եկեղեցու Վրաստանի եւ Իմերեթի թեմում ձեռնարկված քայլերը չկարողացան ապահովել խնդրի արմատական լուծում, սակայն որոշակի դրական տեղաշարժ գրանցվեց. թեմում առաջին անգամ քահանաներին ամսական հաստատուն աշխատավարձ սահմանելու փորձ կատարվեց։ Քահանաների կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով՝ թեմական իշխանությունները, կրթական ծրագրերը բարելավելուց զատ, ընթերցարաններ բացեցին Թիֆլիսում եւ Ախալցխայում։

Աղյուսակ 1. 1853 թ. Թիֆլիսի եկեղեցիների միաբան քահանաների եւ ծխականների թվի համառոտ ցուցակ[34]

№	եկեղեցիների եւ քահանաների անունները	տների թիվը	ար.	իգ.
	Զրկինյանց եւ Վանքի մայր եկեղեցիներ			
1.	*ժամօրհնող Հովհաննես քհն. Սարգսյան*	*166*	*490*	*415*
2.	*Աստվածատուր քհն. Տեր-Աստվածատրյան*	*102*	*132*	*102*
3.	*Հովհան քհն. Տեր-Հովհաննիսյան*	*107*	*343*	*337*
4.	*Մկրտիչ քհն. Տեր-Գրիգորյան*	*109*	*294*	*290*
5.	*Մարկոս քհն. Տեր-Սարգսյան*	*96*	*286*	*240*
6.	*Հակոբ քհն. Զառափյան*	*89*	*250*	*213*
	Կաթուղիկե եկեղեցի			
7.	*Իսահակ ավագ քհն. Սահառունի*	*163*	*443*	*372*
8.	*Ստեփանոս քհն. Մանդինյանց*	*105*	*250*	*216*
9.	*Աստվածատուր քհն. Կախոյանց*	*102*	*205*	*208*

[33] *ՏԵՍ ԳԻՒՏ ԱՒ. ՔՀՆՅ. ԱՂԱՆԵԱՆՑ, Քահանաների նիւթական ապահովութեան խնդիրը, «Լումայ», գք. Ա., 1896, էջ 247–257։*

[34] *ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 469 (2), թ. 271 եւ շրջ.։*

10.	Մելիքսեդեկ քհն. Մուրադյան	110	239	214
	Մողնու Ս. Գեւորգ եւ Կուսանաց Ս. Ստեփանոս եկեղեցիներ			
11.	Ղազար ավագ քհն. Դավթյան	133	337	285
12.	Ավետիք քհն. Տեր-Ավետիքյան	100	232	235
13.	Սարգիս քհն. [՞]	82	184	179
14.	Զաքարիա քհն. Տեր-Գրիգորյան	82	194	174
15.	Պետրոս քհն. Տեր-Գրիգորյան	76	159	162
	Նորաշենի Ս. Աստվածածին եւ Քարափի եկեղեցիներ			
16.	Սրապիոն ավագ քհն. Տեր-Մովսիսյան	91	228	189
17.	Դավիթ ավագ քհն. Շահիկյանց	90	222	188
18.	Սահակ քհն. Տեր-Հարությունյան	103	279	247
19.	Մկրտիչ քհն. Տեր-Գեւորգյան	78	192	164
20.	Ղազար քհն. Տեր-Պետրոսյան	-	-	-
	Բեթղեհեմի Ս. Աստվածածին			
21.	ժամօրհնող Հովհաննես քհն. Մելիքսեթյան	63	162	129
22.	Մեսրոպ քհն. Տեր-Գրիգորյան	41	92	86
23.	Ստեփանոս քհն. Շահբազյան	42	100	86
	Ս. Նշան եկեղեցի			
24.	ժամօրհնող Իսահակ քհն. Ջիալյանց	94	247	219
25.	Անդրեաս քհն. Ամբարդանյանց	99	233	229
26.	Պետրոս քհն. Տեր-Կարապետյան	74	202	162
27.	Գրիգոր քհն. Իզմիրյան	10	19	18
	Ջիգրաշեն եւ Տափի թաղի Ս. Գեւորգ եկեղեցիներ			
28.	Մովսես ավագ քհն. Սայադնյանց	83	199	160
29.	Հովհաննես քհն. [՞]	102	237	241
30.	Վարդան քհն. Քամոյան	87	248	211
31.	Հովհաննես քհն. Տեր-Պետրոսյան	63	139	129
	Հրեշտակապետաց եկեղեցի			
32.	Հովսեփ քհն. Երիցյան	85	180	186
33.	Հարություն քհն. Ջմշկյանց	113	281	234
34.	Բարսեղ քհն. Միրաղյանց	17	28	28
	Ս. Սարգիս ուխտատեղի			
35.	Սիմեոն քհն. Տեր-Սիմոնյանց	64	148	143
36.	Ստեփանոս քհն. Գեւորգյան	40	90	86

Աղյուսակ 2. 1853 թ. Թելավի գործակալության եկեղեցիների միաբան քահանաների եւ ծխականների թվի համառոտ ցուցակ[35]

№	Եկեղեցիների եւ քահանաների անունները	տների թիվը	ար.	իգ.
	Թելավի Ս. Գեւորգ եկեղեցի			
1.	*Գրիգոր քհն. Տեր-Գաբրիելյանց*	*108*	*298*	*265*
2.	*Հարություն քհն. Տեր-Գեւորգյան*	*112*	*366*	*320*
3.	*Խաչատուր քհն. Սուքիասյանց*	*105*	*314*	*291*
4.	*Սարգիս քհն. Տեր-Սարգսյանց*	*103*	*301*	*257*
5.	*Հարություն քհն. Տեր-Մարտիրոսյանց*	*47*	*89*	*91*
	Ձվելգալավանի Ս. Գեւորգ եկեղեցի			
6.	*Եսայի քհն. Մամայանց*	*101*	*297*	*287*
7.	*Աստվածատուր քհն. Մամաջանյանց*	*92*	*328*	*245*
	Ռուիսպիրի Ս. Աստվածածին եկեղեցի			
8.	*Մելիքսեդեկ քհն. Տեր-Բարսեղյան*	*69*	*281*	*235*
	Քիստավուրի Ս. Աստվածածին			
9.	*Իսահակ քհն. Տեր-Հակոբյան*	*82*	*367*	*281*
	Սանիորի Ս. Աստվածածին			
10.	*Զաքարիա քհն. Տեր-Բարսեղյանց*	*88*	*306*	*326*
	Լոմիսցիխե Ս. Սարգիս եկեղեցի			
11.	*Սիմեոն քհն. Տեր-Մովսեսյան*	*50*	*116*	*130*
	Ղորել Ս. Աստվածածին			
12.	*Սողոմոն քհն. Տեր-Հարությունյան*	*40*	*111*	*100*
	Ուրիաթուբանի Ս. Սարգիս եկեղեցի			
13.	*Հովհաննես քհն. Տեր-Հարությունյան*	*75*	*311*	*278*

РЕЗЮМЕ

Священнический вопрос всегда был в центре внимания епархиальных властей Грузино-имеретинской епархии Армянской Апостольской Церкви. Для решения этого вопроса в годы предводительства епископа Аристакеса Седракянца (1883—1889) и архиепископа Геворка Суренянца (1894—1904) были предприняты активные шаги.

[35] *Անդ, թ. 298 եւ շրջ.։*

Епархиальных архиереев особенно волновало снижение авторитета приходских священников среди населения, что было результатом проблем, накопившихся десятилетиями. Основные из них касались обеспечения надлежащего образовательного уровня и решения вопроса материальной обеспеченности священников. Для решения этих проблем были предприняты шаги по улучшению образовательных программ и регулированию системы оплаты священников. В 1900 году была предпринята первая попытка назначить ежемесячную зарплату священникам в Батуми, которая, к сожалению, не распространилась на всю епархию. Работа в этом направлении продолжалась и в последующие годы. Особое внимание обращалось также на создание условий для самообразования священников. Для этого были открыты читальные залы в Ахалцихе и Тбилиси.

SUMMARY

Priestly issues have always been in the focus of attention of the diocesan authorities of the Georgian-Imeretian Diocese of the Armenian Apostolic Church, and for their solution, active steps were taken during the years of the diocesan rule of Bishop Aristakes Sedrakyants (1883—1889) and Archbishop Gevorg Surenyants (1894—1904).

The diocesan authorities were especially worried about the lack of authority of parish priests among the population resulted by problems accumulated during decades, which mainly concerned the appropriate educational level of the clergy and the issue of their material security. To address these problems, steps were taken to improve educational programs and regulate the payment system for priests. In 1900, the first attempt was made to assign a monthly salary to priests in Batumi, which, unfortunately, did not apply to the entire diocese. Attempts in this direction were still made in subsequent years. Special attention was also paid to creating conditions for the self-education of priests. For that purpose, reading rooms were opened in Akhaltsikhe and Tbilisi.